*րոյ Յիսուսի Քրիստոսի, ըստ այնմ «Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն, որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց և ի ներքոյ են գայլք յափշտակողք» (Մատթ. Է. 15). զառաքելականսն բան՝ «Ամենայն, որ յանցանէ և ոչ կայ ի վարդապետութեան Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ, որ կայ ի վարդապետութեան նաեւ զՈրդի և զՀայր ընդունի։ Եթէ ոչ գայցէ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ի տուն և մի՛ ողջոյն տայցէք նմա։ Եւ որ ասացէ նմա ողջոյն, կցորդ լիցի չարեաց գործոց նորա» (Յովհ. Կաթուղիկէ, գլխ. Ա. 9,10,11)։ Զգուշացին ամենեւին չ'թողուլ զնոսա միւս անգամ մտանել յեկեղեցի կամ արժանաւորել զնոսա և զամենայն զորդիս նոցա զընտանիս եկեղեցական սրբազնագործ խորհրդոց, զի մի՛ և նոքա ըստ կեղծաւորութեանց այնց մոլորելոց դատապարտիցին յԱստուծոյ առանց խըրթուիլիւնս առնելոյ ընդ մեզ ճշմարտապէս հաւատացելոց և կեղծաւորելոց, մինչեւ ինքեանք իսկ հաստատուն և կատարեալ զղջմամբ սարջացեալ ընդ այնորիկ մոլորութիւնս իւրեանց կայցեն ի ճշմարիտ հաւատ քրիստոնէութեան համաձայն ծիսից և արարողութեանց մերս առաքելական ամենաբարեպաշտ և ուղղափառ սուրբ եկեղեցւոյ»։

87. Կոնդակի ընթերցումից անմիջապէս յետոյ այն մարդիկ, որոնք յայտնապէս ճանաչուած էին իբր հետեւել խմբի անդամներ, դուրս եկան եկեղեցուց ձեռքերն առած իրանց երկայն փափախները՝ հրճուանքով աւելի, քան տխրութեամբ. սորանից յետոյ եկեղեցուց բաժանուողները գալիս ստորագրում էին, որ իրանք չեն ընդունում Հայաստանեայց Լուսաւորչական եկեղեցին, սրովհետեւ հետեւում են Աւետարանական Լութերական եկեղեցւոյ դաւանութեանը։ Քահանաների ցուցակից երեւում է, որ այդպիսի ստորագրութիւնն կոնդակի ընթերցումից յետոյ տուել էին 38 հոգի գերդաստանի տէր տղամարդիկ, 22 հոգի ամուրի երիտասարդներ, սոցա մէջ էին 12 հոգի միայն Թառայեանց տանից. 3 հոգի Սարգիս Համբարձումեանը իւր 2 եղբայրներով, 2 հոգի՝ Ծկըտ Յոստոմն և իւր որդին, 5 հոգի Ղուլալեանց կոչուած տանից եւայլք։